ՀԵ 83, Էլմ. 609

1. Ցնծա՛, աշխարհ, ցնծա՛ այսօր,
Ցնծա՛ և հավիտյան,
Քանզի ծնավ Արքան հզոր,
Իշխան խաղաղության: (3)

2. Ե՛լ, ով երկիր, ահա կուգա
Ազգաց հույժ ցանկալին,
Տվե՛ք արև ու լուսնկա,
Ողջույն Էմմանուելին: (3)

3. Թո՛ղ Սիոնի որդիք բերկրին,
Հնչեն փող հոբելեան,
Օծյալ անմահ Թագավորին
Երգեն երգ գովության: (3)

4. Թող Հորդանան, ափեր յուր զով
Կազմեն պար ու թափոր.
Եվ Գալիլիան գոռա, պերճ ծով,
Խայտան Հերմոն, Թաբոր: (3)

5. Ե՛լ, Հուդայի վհատ աղջիկ,
Ծաղկած են դաշտ, արոտ,
Գլխուդ պսակ՝ վարդե փնջիկ
Ճակտիդ կապե նարոտ: (3)

6. Ո՜հ, Սարոնի փթթի Ծաղիկ,
Հովտաց անբիծ Շուշան,
Բեթլեհեմի փայլուն Աստղիկ.
Շողա նորանշան: (3)

7. Քեզ ավետիս, Սելով եկավ.
Հռչակե՛ Տեր զնա,
Քնար, շեփոր ու գոռ թմբկավ
Գոչե միշտ՝ Ովսաննա: (3)

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025